

Թիակներու օգնութեամբ առաջ եր-  
թալ : Պարապ յոյս . վասն զի յաջող  
քամի մը ելլելով անիկայ շուտով շու-  
տով առաջ գնաց , և իրենց անկարելի  
էր որ նաւակին ընթացքովն անոր կարե-  
նային հասնիլ : Իսայց այն միջոցին նա-  
ւաստեաց լքմանը նոր եռանդ մը յաջոր-  
դելով՝ վերջին փորձ մըն ալ ըրին ի-  
րենց ուժին : Այս ատեն ուրիշ նաւ մը  
տեսնուեցաւ հորիզոնին վրայ որն որ յա-  
ջող քամիով մը դէպ 'ի նաւաբեկելոց  
կողմը կու գար :

Իսանկ իրեք ժամ անձանձրոյթ աշ-  
խատելէն ետե , վերջապէս նաւէն տես-  
նուելով , նաւը սկսաւ իրենց մօտենալ ,  
և ամենայն մարդասիրական հիւրընկա-  
լութեամբ զիրենք ընդունեցաւ . նաւա-  
պետէն սկսեալ բոլոր մէջինները ձեռ-  
քերնէն եկած խնամքը ցըցուցին այս  
դժբաղջներուն վրայ :

Այս նաւս որ Պրեմացի էր ու Պալ-  
թիմորէն Պրեմ կ'երթար , կը կոչուէր  
լ վիզա . նաւապէտն և բոլոր մէջի նա-  
ւաստիները ամենայն խնամք և մար-  
դասիրութիւն ցըցուցին խեղճերուն .  
այս նաւը մտնենուն երկրորդ օրը ժա-  
մը եօթին ուրիշ նաւ մը տեսնուեցաւ  
որ նոյնպէս լ վիզա կը կոչուէր և Համ-  
պուրէն լ իւ-լ յօռք կ'երթար 150  
Պաերմանացի գաղթականներով : Պրե-  
մացի նաւապէտը նաւաբեկեանները՝ ի-  
րենց ուզելովն ու հաւանութեամբը ,  
Համապուրէցի նաւուն յանձնեց , բաց 'ի  
երկու հոգիէ որոնք ուզեցին Պրեմ  
դառնալ :

Չորս օրէն հասան լ իւ-լ յօռք նոյ-  
եմք . 14<sup>ի</sup>ն երեկոյեան ժամը հինկին , և  
չկրնալով մաքրատան պաշտօնարանէն  
հրաման առնել , հոյն մնացին նոյն գի-  
շեր , և երկրորդ օրը գետին մէջէն ա-  
ռաջ երթալով խարիսխ ձգեցին : լ իւ-  
կիէռ մէկէն փութաց շոգենաւին ըն-  
կերութեան գլխաւորներուն ներկայա-  
նալ , և անոնց ընկերակցութեամբը  
Պաղպիական հիւպատոսին առջելը ել-  
լով՝ երդմամբ հաստատեց պատահած  
դէպքերուն ստուգութիւնն և ծանոյց ի-  
րեն հետ խալսած անձանց անունները :

Լորդէն ծանօթ է ընթերցողաց | իո-  
նէին վնասուելէն ետե ողջ մնացած նա-  
ւաբեկելոց քաշած անտանելի նեղու-  
թիւններն և թէ ինչպէս ձամբան եր-  
կու հոգի մեռած էին , թէ Շ ուբօ-  
կտրիջնաւաստին ծախ թեւը կորսընցու-  
ցած էր սառէն , և քալելու անկարող  
եղեր էր ոտուըները չբանելով՝ երբոր  
լ իւ-լ յօռք հասան . նոյնպէս իրեն ըն-  
կերներէն շատերն ալ իրմէ ոչինչ պա-  
կաս վնասուած էին :

Լ իւ-լ յօռք հասնելէն ու ծանուցա-  
նելէն ետե իրենց գլխուն հանդիպած  
անկարծելի դժբաղզութիր , լ իւկիէռ  
տեղակալը երկու օր վերջը մէկէն դար-  
ձեալ ծով մտաւ շոգենաւով մը որ եր-  
թայ մնացած լաստն ու նաւակները փըն-  
տրուէ : Իրենց այս խուզարկութեանը  
ժամանակ ձիւն , փուք , անձրև և մըր-  
րիկ անպակաս էր : Ի նօգուտ ելլելով  
այս առաջին փորձերնին , առանց լքա-  
նելու երկրորդ անգամ մըն ալ փորձե-  
ցին , բայց ան ալ վախճան մը չունե-  
ցաւ : լ երջապէս յուսով մտուընին դրին  
որ թերևս այն կողմերէն անցած նաւեր  
զիրենք գտած ու ընդունած ըլլան ու  
այսպէսով դարձան իրենց տեղը . բայց  
ինչպէս որ յայտնի է , միայն 17 հոգի  
ապրեցան այս արկածէն :

լ իւկիէռ տեղակալը այս դէպքին  
մէջ ցըցուցած արութեանն , և մարդա-  
սիրութեամբ իր ընկերներն վնասուելու  
ելլելուն համար , լ էգէոնի պատուց  
պատուանշանն ընդունեցաւ :

Պ արիստիպպոս անգամ մը ուրիշէ մը  
բամբասուելով առանց բան մը ըսելու  
սկսաւ նոյն տեղէն հեռանալ . շարա-  
խօսը ետեէն վազեց ու հարցուց թէ  
ինչո՞ն կը փախչիս , վասն զի , ըսաւ , դուն  
ինչպէս կարողութիւն ունիս չարախօ-  
սելու , ես ալ իշխանութիւն ունիմ  
ըսելու :

